ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՖԿՍՊԻ ՈՐԱԿԻ ԱՈՒԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

26.06.2025թ.

ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից 2024-2025 ուստարվա համար պլանավորվել էր իրականացնել Որակի ներքին աուդիտ «Մասնագիտության կրթական ծրագրեր (ՄԿԾ) և դասընթացներ, դասավանդման, ուսուցման և գնահատման գործող համակարգը» ոլորտի շրջանակներում (տես՝ *Ներքին աուդիտի իրականացման ծրագիր և ժամանակացույց 2024-2025 ուսումնական տարվա համար*):

Աուդիտի շրջանակներում առանձին ֆոկուս խմբային հանդիպումներ են անցկացվել դասախոսների խմբերի հետ (թվով՝ 8 ֆոկուս խումբ, յուրաքանչյուրում 10-12 հոգի): Արդյունքում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար վեր են հանվել դասախոսների կարիքները, ուժեղ և թույլ կողմերը: Սույն վերլուծության մեջ ներկայացվում են ֆոկուս խմբերի ընդհանրացված արդյունքները և խնդիրները, որոնք կրկնվում են տարբեր ամբիոններում:

• Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի դասախոսները մեծամասամբ (գրեթե բոլորը) պրակտիկ մարզիչներ են կամ եղել են նախկինում: Մյուս ոլորտների դասախոսական կազմը ևս ունի պրակտիկ փորձառություն համապատասխան ոլորտներում (կինեզիոլոգիա, փրկարար գործ, հոգեբանություն, լրագրություն և այլն): Նշված հանգամանքը հանդիսանում է Ինստիտուտի ուժեղ կողմերից մեկը՝ անմիջական կապ ապահովելով աշխատաշուկայի և բուհի կրթական ծրագրերի միջև: Օրինակ, մարզական ոլորտի մասնագիտությունների դեպքում դասախոսների պրակտիկ փորձառության և մարզաշխարհի հետ ամենօրյա կապի շնորհիվ, օրինակ՝ օլիմպիական խաղերի ժամանակ մրցականոնների փոփոխության կամ մրցաշարե-րում կանոնադրությունների փոփոխությունների դեպքերում վերանայվում են դասավանդվող թեմաները և դասախոսությունների նյութերը՝ ապահովելով կրթական ծրագրերի արդիականությունը: Միջազգային պահանջների փոփոխության դեպքում, բացի Ինստիտուտում ուսուցանվող մարզական հնարքներից, փոփոխվում են նաև մրցույթներին վերաբերող տեսական նյութերը:

• Նախորդ կետի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կրթական ծրագրերում փոփոխությունները և արդիականացումը գրեթե կրում են մշտական բնույթ:

Մասնակից դասախոսները նշում են, որ նախորդ ուսումնական տարում կարևոր փոփոխություն է կատարվել ուսումնական պլանում՝ 1–ին կուրսում ավելացվել են «Մարզչական վարպետության բարձրացման (ՄՎԲ)»–ի և «Ֆիզիկական դաստիարակության տեսության (ՖԴՏ)»–ի ժամերը՝ շեշտադրելով մասնագիտական գիտելիքները և կարողությունները: Մասնակիցների պնդմամբ այդ փոփոխությունները պայմանավորված են գործատուի պահանջով, քանի որ ինտիտուտը պատրաստում է մարզիչ–մանկավարժ, հետևաբար շրջանավարտները պետք է լավ տիրապետեն գործնականին:

• Մասնակիցները նշում են, որ Հայաստանում սպորտին առնչվող ցանկացած փոփոխության մասին առաջինը տեղեկանում են իրենք, դրանով տեղեկատվության փոխանցման առաջնային օղակ են դառնում ուսանողների համար՝ որպես ապագա մարզիչներ կամ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ: Մյուս կողմից Ինստիտուտի՝ ոլորտում գերակա լինելու կարևորագույն գործոններից մեկը շրջանավարտների հաջողություններն են, ովքեր ավարտելուց հետո էլ մշտապես կապի մեջ են:

• Դասախոսների կողմից կիրառվող մեթոդները բազմազան են և ինտերակտիվ: Մասնավորապես շատ են իրականացնում քննարկումներ և վերլուծություններ ուսանողների հետ, դեպքերի և իրավիճակիների հիման վրա վերլուծություններ են կատարվում, իրավիճակային առաջադրանքներ են հանձնարարվում ուսանողներին: Մարզական մրցույթներից վերադարձող ուսանողների հետ պարտադիր անդրադառնում են նրանց թերություններին՝ շտկելու համար, քանի որ ինչպես նշում են. «Չեմպիոն դառնալն ավելի հեշտ է, քան այդ տիտղոսը պահպանելը»: Դասախոսների մի մասը ինքնուրույն աշխատանքներ հանձնարարելիս դեռ պահանջում է ձեռագիր հանձնեն, որ, ինչպես պնդում են. «գոնե գրելով մի բան սովորեն»: Մյուսները ձեռագրին այնքան էլ կողմ չեն և կարծում են այդ պահանջը ժամանակավրեպ է: Գործնական պարապմունքների ժամանակ հիմնականում նորմատիվներին համապատասխան են գնահատվում ուսանողները: Սպորտային ոլորտում գնահատման նորմատիվները՝ որպես ռուբրիկներ, բավականին հստակ են՝ ի տարբերություն մյուս մասնագիտությունների դեպքում:

• Ռեսուրսային ապահովման արդիականացումը դասախոսները համարում են Ինստիտուտի առաջնային խնդիրներից մեկը, ինչը պետք է մշտական ուշադրության կենտրոնում պահել: Լավագույն տարբերակն այն կլինի, որ ուսանողները Ինստիտուտում սովորեն այնպիսի մարզադահլիճներում և մարզագույքով, իսկ մյուս մասնագիտությունների դեպքում՝ համապատասխան նյութատեխնիկական բազայով, ինչը հետագայում մարզչական, ուսուցչական կամ սպորտային ոլորտը սպասարկող այլ գործունեության ժամանակ պետք է կիրառեն: Այդ առումով Ինստիտուտի ռեսուրսային բազան արդիականացման կարիք ունի, ինչը կնպաստի նաև գործնական դասերի տեղում առավել արդյունավետ անցկացմանը:

• Դասախոսները կարևոր են համարում բոլոր ուսանողների դասահաճախումները ուշադրության կենտրոնում պահելը, քանի որ ինչպես նշում են. «Ինչքան էլ գերազանց ծրագրեր կազմենք, մենք վերջնարդյունքին չենք հասցնի, եթե ուսանողը չուզի մասնակցել»: Այս առումով հատկանշական է, որ Ինստիտուտում սովորում են

նաև բարձրակարգ մարզիկներ, որոնք ուզում են ակադեմիական տեսական գիտելիքներ ձեռք բերել: Դասախոսները կարևոր համարեցին վերջիններիս համար անհատական գրաֆիկով հաճախման հնարավորություն ստեղծելը, որը նախկինում եղել է: Այսինքն, եթե չի գալիս դասի, մարզումների է կամ աշխատանքի, այդ գրաֆիկներով լրացնեն բաց թողնված դասերը: Առավել ևս, որ բացակայությունների հիմնական պատճառը կամ մարզումներն են, կամ ուսանողների աշխատելու հանգամանքն է: Չնայած դրան, դասախոսների պնդմամբ ուսանողները մասնագիտական առարկաներից քիչ են բացակայում՝ դրանք կարևորելով:

• Վերապատրաստման անհրաժեշտություն դասախոսները միշտ էլ տեսնում են, քանի որ մասնագիտական զարգացումը անընդմեջ գործընթաց են համարում: Մասնակիցների մի մասը վերապատրաստում անցել են վերջերս, որոշները վերջին երկու-երեք տարվա մեջ չեն վերապատրաստվել: Սպորտային ոլորտի դասախոսների կարծիքով հիմնականում բուհն է վերապատրաստում մյուսներին, վերապատրաստողներն այստեղ են և մասնագիտական վերապատրաստում արդյունավետ կլինի արտերկրյա մասնագետների կողմից: